բաւական է լուցկի ի ձեռս մեծամտելոցն եւ հրամանաց քոց ի վսեր եկելոց առ ի գրգռել զսերմն անմիաբանութեան արբանեկութեամբ սատանայի, որ խափանն լինի այսմ ընդունելի բարւոյ: Եւ արդ եթէ եղծցին խորհուրդք թշնամւոյն, յայնժամ յորդեսցի ուղղորդ ճանապարհն առաջի բարութեանցն, որոց հասանելն ցանկամք:

Իցի՛ւ մեր ամենեցուն մի սիրտ եւ մի ոգի էր, յայնժամ չլինէր ինչ դժուարին զհրամանաց քոց զկնի երթալ եւ զնոսին յարդիւնս ածել: Զի սրբութիւն ձեր գլուխ է եւ առաջնորդ մեծազօր, եթէ ի հոգեւորս եւ եթէ ի ժամանակեայ իրս. եւ ունի ընդ իւրեւ բազում ազգս, որք հասու են աստուածեղէն իրաց. զորոց զպէտսն, որչափ եւ կամիցի, վճարէ ըստ իւրում իմաստութեան եւ փառաց:

Եկեալ յայն երիս խնդիրս՝ ասեմք եթէ պատրաստ եմք մեք հաճել զկամս սրբութեան ձերոյ. այլ սակայն վասն անհնարին վտանգիցն, ընդ որովք կամք ընկճեալք, չիշխեմք ձեռնամուխ ի նորոգումն լինել: Պատեալք պաշարեալք շուրջանակի յանհաւատիցն չհամարձակիմք վճարել զոր սրբութիւնդ ձեր կացեալ ի մէջ հաւատացելոց թելադրին լինի: Բազում են մեր հակառակորդք, որք շուրջ յածին որսալ առիթս. ի պատճառս չարութեան նոցա ջանամք զամենայն ի ծածուկ առնել, զի մի յայտնեալք յականջս անհաւատիցն պատմիցին, յորոց այնուհետեւ անհնարին տառապանս հասանէ մեզ կրել: Որպէս սա-